ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 10159919 քրեական գործով թարգման ներգրավելու մասին

« 26 »փետրվարի 2019թ. ք.Երևան

ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Տ.Ա.Ղազարյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 10159919 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ՝

Սանտոշ Անանդի Անանդիի հաղորդմամբ և Պուգավանա Կարունանիդիի, Վիդնեշ Չանդրաիի, Վիջեյկումար Կանդասամիի, Իդեապրակաշ Մանոհրամի բացատրությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2019 թվականի փետրվարի 5-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, «Հայբուսակ» համալսարանի հարևանությամբ Վիվեկ Տհամարասելվանի Տհամարահսելվանը և Մանոջպռաբհակառ Ռաջինդռենի Ռաջինդռենը անձնական հարցերի շուրջ վիճաբանել են Ս.Անանդի հետ, որի ընթացքում վերջիններս՝ յուրաքանչյուրը 2-3 անգամ, ձեռքերով հարվածել են Ս.Անանդի մարմնի տարբեր մասերին՝ վերջինիս պատճառելով ֆիզիկական ցավ: Բացի այդ, նույն վիճաբանության ժամանակ Վ.Տհամարահսելվանը և Մ. Ռաջինդռենը սպառնացել են սպանել Ս.Անանդին, որի հետևանքով վերջինիս մոտ իր կյանքի և առողջության համար առաջացել է վախի և անհանգստության զգացողություն:

Դեպքի առթիվ 2019 թվականի փետրվարի 11-ին ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում հարուցվել է թիվ 10159919 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 137-րդ հոդվածի 1-ին մասով:

2019 թվականի փետրվարի 15-ին թիվ 10159919 քրեական գործը ենթակայության կարգով ուղարկվել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ սույն գործով տուժող Սանտոշ Անանդին և վիճաբանության մյուս մասնակիցները չեն տիրապետում հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, այլ տիրապետում է անգլերեն լեզվին և անհրաժեշտ է վերջիններիս մասնակցությամբ կատարվելիք քննչական ու դատավարական գործողություններին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Սույն քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարինե Ռուբենյանին և միաժամանակ նրան ծանոթացնել սույն որոշմանը և պարզաբանել իր իրավունքները և պարտականությունները.

ՀԿԳ քննիչ՝ Տ.Ա.Ղազարյան

Որոշման մասին ինձ ծանուցվել է, միաժամանակ պարզաբանվել են իմ իրավունքները և պարտականությունները, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման՝ Մ. Ռուբենյան

«26» 02 2019թ

Տեղեկանք

ք.Երևան

28.02.2019թ.

Տրվում է «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարինե Ռուբենյանին առ այն, որ նա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 10159919 քրեական գործով նախաքննության ընթացքում կատարել է ընդհանուր 6 ժամ 55 րոպե տևողությամբ բանավոր և գրավոր թարգմանություն հայերենից անգլերեն և հակառակը:

ՀԿԳ քննիչ Տ.Ա.Ղազարյան

ՈՐՈՇՈՒՄ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

23-ը հունվարի 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Ա.Կ. Աբրոյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13973118 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի դեկտեմբերի 06-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Անդրեա Բաջիոլին, որ 2018 թվականի դեկտեմբերի 04-ին՝ ժամը 20:00-ից մինչև ժամը 21:15-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը, կոտրելով Երևան քաղաքի Ամիրյան և Սարյան փողոցների խաչմերուկում կայանված իրեն ամրակցված 28 D 019 AM պետհամարանիշի ավտոմեքենայի աջ կողմի հետևի դռան ապակին, սրահից գաղտնի հափշտակել է պայուսակը, որի մեջ եղել են պաշտոնական փաստաթղթեր՝ պատճառելով մոտ 275.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի դեկտեմբերի 08-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 324-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13973118 քրեական գործը, որը 12.12.2018թ. ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին՝ նախաքննության:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Անդրեա Բաջիոլին չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, տիրապետում է անգլերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Մարինե Նորիկի Ռուբինյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 13973118 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Մարինե Նորիկի Ռուբինյանին /AM0839844/:

2. Մարինե Նորիկի Ռուբինյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու

պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝ **Ա.Կ. ԱԲՐՈՅԱՆ**

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

_____ Մ. Ռուբինյան

«23» _____01_____ 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ք.Երևան, Ս.Վրացյան 90

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է այն մասին, որ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ ՄԱրինե Ռուբենյանը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13973118 քրեական գործով կատարված տուժողի հարցաքննության առնչությամբ 3 ժամ 20 րոպե կատարել է գրավոր և բանավոր թարգմանություն անգլերենից հայերեն և հակառակը:

ՔՆՆԻՉ՝ **Ա.Կ. ԱԲՐՈՅԱՆ**

ՈՐՈՇՈՒՄ
«Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Տաթևիկ Քոչարյանին որպես թարգմանիչ հրավիրելու մասին

10.01.2019 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ՝ Է.Ս.Կարապետյանս, քննարկելով վարույթիս թիվ 13209918 քրեական գործերի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2017 թվականի օգոստոսի 19-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում ստացվել է Լիյա Սարգսյանի հաղորդումն առ այն, որ Դավիթ Պետրոսյանը և Ռուզաննա Ղազարյանը խարդախությամբ հափշտակել են իրեն, մորը՝ Զելֆիրա Տեր-Օհանյանին և եղբորը՝ Ռուբեն Սարգսյանին պատկանող Երևան քաղաքի Հ.Թումանյան փողոցի 35-րդ շենքի 11-րդ բնակարանը:

Դեպքի առթիվ ոստիկանության Կենտրոնական բաժնում նախապատրաստվել են նյութեր, որոնց հիման վրա վարույթն իրականացնող մարմինը 2017 թվականի օգոստոսի 28-ին որոշում է կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 30-ի <<Բողոքը քննության առնելու մասին>> որոշմամբ բավարարվել է դիմողներ Լիյա Սարգսյանի և վերջինիս ներկայացուցիչ Հունան Բաբայանի բողոքը և վերացվել է <<Քրեական գործի հարուցումը մերժելու մասին>> վարույթն իրականացնող մարմնի որոշումը:

01.10.2018թ.-ին Լիյա Սարգսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերը ստացվել են Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում:

04.10.2018թ.-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում Լ.Սարգսյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 13209918 քրեական գործը, որը նախաքննության կատարման նպատակով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում քննչական գործողությունների կատարմանը վկա Ռուբեն Սարգսյանի մասնակցությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է ռուսերեն լեզվի թարգմանիչ, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ՝

Թիվ 13209918 քրեական գործով հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից, թարգմանիչ՝ Տաթևիկ Քոչարյանին / անձնագիր՝ AR0516452/, ով տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև

նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ **Է.Ս.Կարապետյան**

Ինձ բացատրված է որպես թարգմանիչ իմ իրավունքներն ու պարտականություններ: Միաժամանակ նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ

Տեղեկանք

Թիվ 13209918 քրեական գործի նախաքննության ընթացքում թարգմանիչ Տաթևիկ Քոչարյանը մասնակցել է տուժող Ռուբեն Սարգսյանի հարցաքննությանը /10.01.2019թ. ժամը 11:00-ից 14:01-ը/ և Ռուբեն Սարգսյանը և վկա Դավիթ Պետրոսյանի միջև առերես հարցաքննությանը /11.01.2019թ. ժամը 11:18-ից 13:42-ը/:

ՀԿԳ քննիչ՝ Է.Ս.Կարապետյան

11.01.2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

01-ը փետրվարի 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Ա.Ռաֆաելյանս, քննարկելով Աբուլֆազլ Հասանի Չավոշիյաղուզաղաջիի մարմնական վնասվածք ստանալու փաստի առթիվ նախապատրաստված նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունից Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին է ստացվել ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿՀ պետի կողմից հասցեագրված գրությունն այն մասին, որ 11.01.2019թ. ՀՀ Վերաքննիչ դատարանից Նուբարաշեն ՔԿՀ է ընդունվել կալանավոր Աբուլֆազլ Հասանի Չավոշիյաղուզաղաջին, ում գլխի գագաթային շրջանի մոտ հայտնաբերվել է 4սմ. երկարության պատռված վերքի ձևով վնասվածք:

Նշվածի կապակցությամբ Ա.Չավոշիյաղուզաղաջին հայտնել է, որ վնասվածքը ստացել է դատական նիստերի դահլիճի դռանը հարվածելու արդյունքում:

Փաստի առթիվ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր:

Պարզվել է, որ Ա.Չավոշիյաղուզաղաջին հանդիսանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է պարսկերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Հրանուշ Մկրտչի Թախմասյանը ունի բարձրագույն կրթություն, ստացել է թարգմանչի որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1.Աբուլֆազլ Հասանի Չավոշիյաղուզաղաջիի մարմնական վնասվածքներ ստանալու փաստի առթիվ նախապատրաստված նյութերով Հրանուշ Մկրտչի Թախմասյանին ներգրավել որպես թարգմանիչ և այդ մասին ստորագրությամբ հայտնել նրան:

2.Հրանուշ Մկրտչի Թախմասյանին պարզաբանել թարգմանչի իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ **Ա.Ռաֆաելյան**

Սույն որոշումն ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝ _____

Տեղեկանք

04.02.2019թ. ք.Երևան

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ "Վի Գրուպ" ՍՊԸ-ի աշխատակից, թարգմանիչ Հրանուշ Մկրտչի Թախմասյանը, ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Աբուլֆազլ Հասանի Չավոշիյաղուզաղաջիի ստացած մարմնական վնասվածքների փաստի առթիվ նախապատրաստված նյութերի շրջանակներում, որպես թարգմանիչ, երեք ժամ մասնակցել է քննչական և դատավարական գործողությունների:

Շենգավիթ վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ,
երկրորդ դասի խորհրդական՝ **Ա. Ա. Ռաֆաելյան**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

<<22>> հունվարի 2019թ. **քաղաք Երևան**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Օ.Գ.Հարությունյանս, քննարկելով վարույթիս տակ գտնվող թիվ 17159218 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի փետրվարի 6-ին «Արարատբանկ» ԲԲԸ-ից հաղորդում է ստացվել ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին այն մասին, որ Արմեն Լևոնի Թովմասյանը Զավեն Սերյոժայի Աղաջանյանի կողմից բանկին ունեցած վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու նպատակով, 25.09.2017թ-ին բանկի Ավան Առինջ մասնաճյուղի աշխատասենյակներից մեկում, այդ մասնաճյուղի կառավարչի տեղակալ Վահագն Սամվելի Սարգսյանին տվել է մոտ 7.703.586 ՀՀ դրամին համարժեք 16.120 ԱՄՆ դոլար, ով Արմեն Թովմասյանին տվել է վճարումը հաստատող փաստաթուղթ, իսկ 2 օր անց անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականը տրամադրվել է Արմեն Թովմասյանին: 01.02.2018թ. բանկից զանգահարել են Արմեն Թովմասյանին և հայտնել, որ Զավեն Աղաջանյանն ունի ժամկետանց պարտավորություններ, Արմեն Թովմասյանի կողմից ներկայացված անդորրագրում նշված գումարը Զավեն Աղաջանյանի վարկային պարտավորությունների մարմանը չի ուղղվել:

Դեպքի առթիվ 15.02.2018թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հարուցվել է թիվ 17159218 քրեական գործը:

16.02.2018թ. սույն քրեական գործը ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել է վարույթ:

13.02.2018թ.՝ ժամը 19:50-ին, ՀՀ ոսաիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում և բացատրություն է տվել «Արարատ բանկ» ԲԲԸ-ի լիազոր ներկայացուցիչ Դավիթ Ռադիկի Ազիզյանն այն մասին, որ 2018 թվականի փետրվար ամսին, նշված բանկում իրականացված աուդիտի արդյունքում պարզվել է, որ 24.10.2017 թվականին նույն բանկի Ավան Առինջ 3/17 հասցեում գործող մասնաճյուղում, նույն մասնաճյուղի աշխատակիցների կողմից, ավանդատուներ՝ Իրենա Էդուարդի Առուստամյանի և վերջինիս ամուսնու՝ Կարեն Լևոնի Առուստամյանի ավանդային հաշիվներից դուրս են բերվել գումարներ, որով ըեկերությանը պատճառվել է ընդհանուրը՝ 20.400 ԱՄՆ դոլլարի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 16.02.2018թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հարուցվել է թիվ 17159218 քրեական գործը:

19.02.2018թ. սույն քրեական գործը ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել է վարույթ:

19.02.2018թ. թիվ 17159218, 17159818 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, իսկ միացված գործին շնորհվել 17159218 համարը:

03.05.2018 թվականին՝ ժամը 20.00-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում և բացատրություն է տվել Մերի Աշոտի Ավետիսյանն այն մասին, որ 2011 թվականին ամուսինը՝ Արթուր Մեքենյանը, իսկ 2012 թվականին իր մայրը՝ Մարգարիտա Իսրաելյանը, ,,Հայկական Զարգացման բանկ,, ԲԲԸ-ի Ավան մասնաճյուղում գրավով վարկեր են վերցրել և գումարի մարումը 2013 թվականից դժվարացել են կատարել: Իրավիճակից դուրս գալու համար, նույն բանկի աշխատակից Վահագն Սամվելի Սարգսյանը, 2015 թվականին իրենց առաջարկել է վարկերը վերավարկավորել և նույն վարկերի գրավի առարկա հանդիսացող իրենց՝ Հովհաննիսյան փողոցի 25/1 շենքի 5-րդ և Մարգարիտա Իսրաելյանի՝ նույն շենքի 31-րդ բնակարանները կրկին գրավադնել և վերցված գումարով մարել նախորդ վարկերն ու վճարումներ կատարել նոր վարկերի դիմաց: Այնուհետև, իրականացրել են վերավարկավորումները, սակայն մարումները նույնպես չեն կարողացել նորմալ կատարել: 2015 թվականի հոկտեմբեր ամսին Վահագն Սարգսյանն իրենց առաջարկել է կրկին վերավարկավորում իրականացնել և նշված թիվ 5-րդ բնակարանը գրավադնել իր անվամբ: Դրանից հետո ինքը ստորագրել է բազմաթիվ փաստաթղթեր, սակայն Վահագն Սարգսյանը հայտնել է, որ վարկի տրամադրումը մերժվել է: 2016 թվականի սեպտեմբեր ամսին Վահագն Սարգսյանն իրենց առաջարկել է թիվ 31 բնակարանը վստահելի մի անձի անունով կրկին վերավարկավորել, ինչին կրկին համաձայնվել են ու որպես վարկառու ներկայացել է Արթուր Մեքենյանի հորեղբայրը՝ Աշոտ Մեքենյանը, ում անվամբ նշված բնակարանը կրկին գրավադրվել է բանկում, ինչից հետո իրենք սկսել են մարել Աշոտ Մեքենյանի անվամբ ձևակերպված վարկը: 2018 թվականի հունվար ամսին իրեն զանգահարել են ,,Զարգացման Հայկական բանկ,, ԲԲԸ-ի իրավահաջորդ ,,Արարատ բանկ,, ԲԲԸ-ից և հայտնել են, որ ինքն իր անվամբ ունեցած վարկի մարումներն ուշացրել է և չի մարում: Քանի որ ինքն իր անվամբ վարկ չի ունեցել, պարզաբանման համար այցելել է նշված բանկ, որտեղ տեղեկացել է, որ դեռևս 2015 թվականից իր անվամբ առկա է եղել իրենց բնակարանի գրավադրմամբ տրամադրված 10.500 ԱՄՆ դոլլարի վարկ, ինչը մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսը պատշաճ կարգով մարվել է, սակայն 2018 թվականի հունվար ամսին մարում չի կատարվել: Այնուհետև, հասկացել է, որ դեռևս 2015 թվականին Վահագն Սարգսյանն իր անվամբ իրենց բնակարանի գրավադրմամբ վարկի ձևակերպումն իրականացրել է և տիրացել է 10.500 ԱՄՆ դոլլարին, սակայն խաբելով իրենց՝ հայտնել է, որ վարկի ձևակերպումը մերժվել է, իսկ ներկայումս բանկն իրենից պահանջում է մարել մոտ 4.200.000 ՀՀ դրամին համարժեք՝ 8600 ԱՄՆ դոլլարը, ինչը վարկի մնացորդ հանդիսացող գումարն է:

Դեպքի առթիվ 05.05.2018թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի հետաքննության բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, հարուցվել է թիվ 17176218 քրեական գործը:

07.05.2018թ. սույն քրեական գործը ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել վարույթ:

07.05.2018թ. թիվ 17159218, 17176218 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, իսկ միացված գործին շնորհվել 17159218 համարը:

Քրեական գործով անհրաժեշտ է հարցաքննել Էներգինա Վասիլի Մանուկյանին, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է հայերեն բանավոր, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Ուստի Էներգինա Մանուկյանին հարցաքննելու նպատակով քրեական գործով անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, որը տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություններ հայերենից ռուսերեն և հակառակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Վարույթիս թիվ 17159218 քրեական գործով, որպես թարգմանիչ հրավիրել <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Արինե Հայկի Հարությունյանին, որն ունի բարձրագույն կրթություն, ռուսերեն լեզվից թարգմանություններ կատարելու փորձ և որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություն, քրեական գործով չշահագրգռված անձ է:

2. Որոշման մասին հայտնել թարգմանիչին, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Օ.Գ.Հարությունյան

Որոշումը ինձ հայտնվել է, պարզաբանվել են ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն և պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Համաձայն եմ կատարել թարգմանություն:

Թարգմանիչ՝ Արինե Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«22» հունվարի 2019թ. ք.Երևան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Ավան և նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Օ.Գ.Հարությունյանս, վարույթիս թիվ 17159218 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ 2019թ. հունվարի 22-ին սույն քրեական գործով որոշում է կայացվել թարգմանիչ հրավիրելու մասին և որպես թարգմանիչ հրավիրվել է «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Արինե Հարությունյանը:

Արինե Հարությունյանի մասնակցությամբ 2019թ. հունվարի 22-ին կատարվել է ռուսերեն լեզվով թարգմանություն՝ ընդհանուր 3 ժամ տևողությամբ քննչական գործողություններ:

Ավագ քննիչ՝ Օ.Հարությունյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«21» հունվարի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Լ. Ֆ. Բաղդասարյանս, վերանայելով վարույթիս թիվ 17953618 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի դեկտեմբերի 14-ին՝ ժամը 23:30-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում և բացատրություն է տվել Հայկ Սուրենի Սահակյանն այն մասին, որ նույն օրը՝ ժամը 20:00-ի սահմաններում, իր "Օպել" մակնիշի 35ZF798 հաշվառման համարանիշի ավտոմեքենան լվանալու նպատակով տարել է Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Խուդյակով փողոցի 164 հասցեում գործող "Միստր Վաշ" ավտոլվացման կետ, որտեղ իր ավտոմեքենան լվացել են երկու ազգությամբ հնդիկներ: Վերջիններիս կողմից ավտոմեքենան լվանալուց հետո վերադարձել է տուն՝ Ավան 1-ին նրբանցք 4-րդ տուն, որտեղ հայտնաբերել է, որ ավտոմեքենայի սրահի հետևի նստատեղի վրայից գողացել են իր "Սամսունգ" մոդելի բջջային հեռախոսը՝ պատճառելով ընդհանուրը՝ մոտ 100.000 ՀՀ դրամի գույքային վնաս՝ հավելելով, որ բջջային հեռախոսը գողացվել է ավտոմեքենան լվացած անձանց կողմից:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ Հայկ Սահակյանի ավտոմեքենան լվացել են Ռեջի Վարգիզ Վարգեշը և Ջինու Ջիմի Ջոզեփը:

Հաղորդման հիման վրա 24.12.2018թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի Ավանի բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17953618 քրեական գործը:

28.12.2018թ. սույն քրեական գործը ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և նույն օրը նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել ազգությամբ հնդիկ Ջինու Ջիմի Ջոզեփին և Ռեջի Վարգիզ Վարգեշին, ովքեր չեն տիրապետում գրավոր և բանավոր հայերեն լեզվին /խոսքին/, այլ տիրապետում են հնդկերեն գրավոր և բանավոր լեզվին /խոսքին/:

Նկատի ունենալով, որ Ջինու Ջիմի Ջոզեփին և Ռեջի Վարգիզ Վարգեշին չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյան ազատորեն տիրապետում է հայերեն և հնդկերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

Վարույթիս թիվ 17953618 քրեական գործով «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչրարյային ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝ **Լ. Ֆ.Բաղդասարյան**

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները: **Մ.Աչարյա**

21.01.2019թ.

ք.Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 17953618 քրեական գործով «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Աչարյան կատարել է 4 ժամ բանավոր թարգմանություն:

Քննիչ՝ **Լ. Բաղդասարյան**